Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

People in Need

ԲՈՒՆ

## «Կայուն, ազդեցիկ և ներառական քաղհասարակություն»

## ենթադրամաշնորհների բաց մրցույթ

### Ծրագրի մասին

«Կայուն, ազդեցիկ և ներառական քաղհասարակություն» (ԿԱՆՔ) ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության աջակցությամբ՝ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (ԺԶՀ), «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության (ՄԿՄ) և «Բուն» գիտամշակութային հիմնադրամի կողմից: Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում՝ որպես դիմակայուն, անկախ և վստահելի գործոն ժողովրդավարական կառավարման, քաղաքականությունների մշակման և համայնքային հզորացման գործում:

### Ծրագրի հիմնական բաղադրիչներն ու գործողությունները

ԿԱՆՔ ծրագրի շրջանակում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն իրականացում է հետևյալ հիմնական գործողությունները՝

1. **«Ֆինանսական աջակցություն երրորդ կողմին» (FSTP/Financial Support to Third Parties)**, որի նպատակն է աջակցել Հայաստանի 10 մարզերում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)՝ իրականացնելու իրենց առաքելությանը համապատասխանող նախագծեր և նպաստել կազմակերպական երկարաժամկետ կայունությանը:

2. **Կարողությունների զարգացում**՝ ԿԱՆՔ ծրագրի ողջ ընթացքում (շուրջ 2.5 տարի) «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն, գործընկեր կառույցների հետ համատեղ, առաջարկելու է կարողությունների զարգացման գործընթաց, որի նպատակն է հզորացնել ՔՀԿ-ների ներքին կարողություններն ու կայունությունը: Ծրագրի մեկնարկին, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն աջակցելու է ենթադրամաշնորհառու ՔՀԿ-ներին ինքնագնահատելու իրենց կարողություններն օգտագործելով մասնակցային «**Կազմակերպական կարողությունների գնահատման գործիքը (ԿԿԳ)**: Ինքնագնահատման արդյունքում կազմվելու է **Զարգացման գործողությունների պլան**, որի հիման վրա ՔՀԿ-ները ստանալու են թիրախային կարողությունների զարգացում՝ ուղղված կարիքների և

բացերի լրացմանը: ԿԱՆՔ ծրագրի ընթացքում ՔՀԿ-ները մասնակցելու են գործընկերային ուսուցման միջոցառումների, փոխայցերի, համագործակցային նախաձեռնությունների և սցենարային պլանավորման աշխատարանների: Ծրագրի ավարտին ՔՀԿ-ները ևս մեկ անգամ իրականացնելու են ինքնագնահատում, օգտագործելով **ԿԿԳ գործիքը,** արձանագրելու արդյունքները**:**

Կարողությունների զարգացման բաղադրիչը իրականացվում է ԿԱՆՔ ծրագրի ողջ ընթացքում, և ակտիվ մասնակցությունն անհրաժեշտ է զգալի արդյունքների համար:

## «Ֆինանսական աջակցություն երրորդ կողմին» (FSTP/Financial Support to Third Parties)

**Ենթադրամաշնորհները տրամադրվելու են երկու սխեմայով`**

**<u>Սխեմա 1</u>**

Այս սխեմայի շրջանակում յուրաքանչյուր ընտրված ՔՀԿ հնարավորություն կունենա ստանալ 8,500,000-15,000,000 ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն` իրականացնելու կազմակերպության առաքելությանն ուղղված ծրագիր, միևնույն ժամանակ զարգացնելով ներքին կարողությունները: Սխեմա 1-ի շրջանակում, ընդհանուր առմամբ, աջակցություն կստանա 20 կազմակերպություն:

Նշում. Սխեմա 2-ին մասնակցության հնարավորություն կունենան **միայն Սխեմա 1**-ի շրջանակներում ընտրված կազմակերպությունները, ուստի մանրամասները հասանելի կլինեն ավելի ուշ փուլում՝ փակ մրցույթի տեսքով: Այս փուլում ընդունվում են միայն **<u>Սխեմա 1-ի հայտերը</u>**:

**<u>Սխեմա 2</u>**

**Սխեմա 1-ի շրջանակում** ընտրված ՔՀԿ-ները հնարավորություն կունենան դիմելու լրացուցիչ ֆինանսավորման՝ մասնակցելով նորարարական ֆորմատով իրականացվող մրցույթի: Մասնակից ՔՀԿ-ները կներկայացնեն իրենց ծրագրերը ժյուրիին և հանրությանը: Քվեարկության արդյունքում կընտրվեն հաղթող ՔՀԿ-ներ՝ ստանալով ֆինանսական աջակցություն ներկայացված ծրագրի իրականացման համար: Սխեմա 2-ի նպատակն է բարձրացնել ՔՀԿ գործունեության տեսանելիությունը, ապահովել թափանցիկությունը և ընգծել համայնքային մարտահրավերները: Նախատեսվում է տրամադրել ֆինանսական աջակցություն 8 ՔՀԿ-ների, իսկ ընդհանուր բյուջեն կազմում է 87,000,000 ՀՀ դրամ:

## <u>Հայտատու լինելու պայմանները</u>

ՔՀԿ-ներ, որոնք՝
- գրանցված են Հայաստանում,
- գործում են Երևանից դուրս համայնքներում,

- գրանցվել են վերջին 6 ամսից 5 տարվա ընթացքում:

**Կարևոր.** Ենթադրամաշնորհին դիմող կազմակերպությունները պետք է պատրաստակամություն հայտնեն մասնակցելու ԿԱՆՔ ծրագրի ընթացքում իրականացվող կազմակերպական կարողությունների զարգացման ողջ գործընթացին: **Տես՝ Ծրագրի հիմնական բաղադրիչներ**:

## Ընդունելի գործողություններ

Ենթադրամաշնորհի շրջանակում իրականացվելիք գործողությունները կարող են միևնույն ժամանակ ուղղված լինել թե՛ ծրագրերի իրականացմանը, թե՛ կազմակերպական կարողությունների զարգացմանը:

Ընդունելի ծրագրերի օրինակներ՝

- **Մարդու իրավունքներ**. Իրազեկման արշավներ, իրավունքների պաշտպանության գործողություններ և իրավատերերի կամ պարտականություններ կրողների կարողությունների զարգացում:
- **Խոցելի խմբեր**. Աջակցության և հզորացման նախաձեռնություններ, ներառյալ ծառայությունների, իրավաբանական օգնության, կրթության և սոցիալական ներառման հասանելիությունը:
- **Քաղաքականության երկխոսություն (մարզային և հանրապետական)**. Փաստերի վրա հիմնված խորհրդակցություններ, շահագրգիռ կողմերի ներգրավում և նախաձեռնություններ, որոնք հիմք են հանդիսանում հանրային քաղաքականության կամ տեղական կառավարման համար:
- **Ժողովրդավարական արժեքներ**. Քաղաքացիական կրթություն, թափանցիկության և հաշվետվողականության ջանքեր, մասնակցային գործընթացներ և քաղաքացիների ներգրավվածություն:
- **Նախընտրական գործընթացներ**. Անկուսակցական ընտրողների կրթություն, քաղաքացիական ներգրավվածություն և ընտրությունների մոնիթորինգ: Գործունեությունը չպետք է աջակցի կամ հակադրվի որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի:

Ներքին կարողությունների զարգացման օրինակներ՝

- Ներքին քաղաքականության, ընթացակարգերի և համակարգերի ներդրում կամ բարելավում
- Կազմակերպական ռազմավարական առաջնահերթությունների իրականացում
- Նոր մոտեցումների, գործիքների կամ դրամահավաքի ռազմավարությունների մշակում
- Թվային կամ ֆիզիկական անվտանգության ամրապնդում

- Կազմակերպական գործունեության բարելավման համար անհրաժեշտ սարքավորումների գնում
- Ռազմավարական կամ գործառնական բարելավմանը նպաստող այլ հիմնավորված գործողություններ

**Ներկայացվող ծրագրերը պետք է լինեն 18 (նվազագույնը) - 30 (առավելագույնը) ամիս տևողությամբ:**

**Ընտրված ՔՀԿ-ների հետ պայմանագրի ստորագրումը նախատեսվում է 2026 թվականի մարտ ամսին:**

**Նշում.** Դրամաշնորհը կարող է օգտագործվել որպես ընթացիկ ծրագրի համաֆինանսավորում, եթե նախատեսված և ընթացիկ գործողությունները ուղղակիորեն կապված են: Կարիքները պետք է հստակորեն հիմնավորված լինեն, համապատասխանեն գործող դոնորական համաձայնագրերին, և բոլոր ֆինանսավորման աղբյուրները պետք է բացահայտվեն:

## Ընտրության չափանիշներ

**Հայտերը կգնահատվեն յուրաքանչյուր չափանիշին տրված հետևյալ միավորի հիման վրա**

| *Չափանիշ* | *Առավելագույն միավոր* |
|---|---|
| ***Համապատասխանություն կազմակերպության առաքելությանը և ԵՄ առաջնահերթություններին.*** *Հայտն աջակցում է կազմակերպության առաքելությանը և համապատասխանում է ԵՄ առաջնահերթ ոլորտներին (օր.՝ կոռուպցիայի դեմ պայքար, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանություն, գենդերային հավասարություն, շրջակա միջավայրի պաշտպանություն):* | ***25*** |
| ***Հստակություն և իրագործելիություն.*** *Մեթոդաբանությունը լավ սահմանված և իրատեսական է, ներառում է մատչելիության, հավասարության և ներառման նկատառումներ:* | ***20*** |
| ***Գումարի և որակի հարաբերակցություն.*** *Բյուջեն ծախսարդյունավետ է, իրատեսական և ցույց է տալիս ամուր կապ ծախսերի և ակնկալվող արդյունքների միջև:* | ***15*** |
| ***Տեղական համատեքստի ըմբռնում.*** *Հայտը ցուցադրում է տեղական կարիքների և արմատական պատճառների ուժեղ վերլուծություն:* | ***15*** |
| ***Ազդեցություն և կայունություն.*** *Հայտը ցույց է տալիս չափելի արդյունքներ և նպաստում է երկարաժամկետ ազդեցությանը:* | ***15*** |

| | |
|---|---|
| ***Կազմակերպչական կարողություններ.*** *Հայտատուն ունի բավարար մարդկային ռեսուրսներ և անցյալում իրականացված համայնքային կամ քաղաքացիական նախաձեռնությունների օրինակներ* | ***10*** |

## Ենթադրամաշնորհային փաթեթ

Ենթադրամաշնորհային փաթեթը պետք է ներառի՝

- Մանրամասն լրացված Հայտաձևը,
- Բյուջեի լրացված ձևաթուղթը,
- Կազմակերպության գրանցման վկայականը,
- Կազմակերպության կանոնադրությունը,
- Պարտավորության հայտարարագիրը,
- Նախկին փորձից օրինակներ (առավելագույնը 2 էջ)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն մեկ էլեկտրոնային նամակով՝ PDF կամ Word ձևաչափով, ստորագրված: Հայտերը կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ grantsarmenia@peopleinneed.net

**Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ փետրվարի 8:**

**Վերջնաժամկետից հետո ստացված հայտերը չեն դիտարկվի:**

**Teams հարթակով տեղեկատվական հանդիպում՝ ս.թ. հունվարի 23, ժամը 11:00**

**Հանդիպման հղում՝ ԿՎՆՔ ծրագիր – Մասնակցության հայտ - Տեղեկատվական հանդիպում | Meeting-Join | Microsoft Teams**

Դրամաշնորհային ծրագրի հայտերի գնահատման և ընտրության գործընթացի կամ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի հետ կապված ցանկացած առաջարկ, հարց կամ բողոք կարող եք ներկայացնել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան գրասենյակ՝ crm.armenia@peopleinneed.net էլեկտրոնային հասցեով, կամ կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 93 68 88 70:

## Կոնտակտային տվյալներ

Հայտերի լրացման կամ մանրամասների համար կարող եք կապ հաստատել հետևյալ էլ. հասցեով՝ avetik.pepanyan@peopleinneed.net